



ՄՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ  
ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 2-ՐԴ B-FOST 2018  
ՀԱՄԱԺՈՂՈՎ

15-17 հոկտեմբեր, 2018 Երևան, Հայաստան

ՄՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

2-ՐԴ B-FOST ՀԱՄԱԺՈՂՈՎ, 2018

Ուրախ ենք տեղեկացնել Սննդի Գիտության և Տեխնոլոգիաների Սևծովյան  
Ասոցիացիայի 2-րդ համաժողովին մասնակցելու հնարավորության  
մասին, որը տեղի կունենա 2018 թ. հոկտեմբերի 15-17, Երևանում



2-րդ B-FoST 2018 համաժողովի կազմակերպչական կոմիտեն ուրախ է տեղեկացնել Ձեզ տեղի ունեցող համաժողովի մասին, որը լավ հնարավորություն կընձեռի Ձեզ ներկայացնելու ձեր մասնագիտական աշխատանքները: Այս միջոցառմանը հնարավորություն կստեղծի մեկ վայրում ներգրավելու ավելի քան **300 մասնակիցների**:

2-րդ B-FoST 2018 համաժողովը նվիրված է հիմնարար և կիրառական սննդագիտության, հիգիենիկ ինժեներիայի և նախագծման, սննդի կեղծումների, սննդի արդյունաբերության նոր տեխնոլոգիաների, սննդամթերքի անվտանգության օրենքների և կանոնակարգերի, սննդամթերքի փորձաքննության և որակի վերահսկողության, սննդամթերքի անվտանգության մանրէաբանական և քիմիական կողմերի, սնման, առողջության և սննդի տեխնոլոգիայի, սննդի արդյունաբերությունում մաքրման, լվացման և ախտահանման ընթացակարգերի բնագավառներում տեղի ունեցող վերջին զարգացումներին:

Բոլոր մասնագիտացված ընկերությունները, հաստատություններն ու մատակարարները հրավիրված են ներկայացնելու իրենց վերջին արտադրանքներն ու ծառայությունները համաժողովի շրջանակներում կազմակերպվող ցուցահանդեսում:

**ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ Է ՍԵՎԾՈՎՅԱՆ ՍՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ (B-FOST) և ՍՆՆԴԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ASFOST) ԿՈՂՄԻՑ:**



**Համաժողովը կազմակերպվում է հետևյալ ընկերությունների աջակցությամբ**



**Համաժողովի պաշտոնական լեզուն անգլերենն է նաև լինելու է սինխրոն թարգմանություն:**

## Ցուցահանդեսի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

2-րդ B-FoST համաժողովի մասնակցությունը ընձեռնում է Ձեզ գերազանց և եզակի հնարավորություն գտնել նոր հաճախորդներ, ստեղծել մասնագիտական ցանց, փնտրել բիզնեսի համար նոր հնարավորություններ, ներկայացնել սննդարդյունաբերական սարքավորումներ և սննդամթերքի արտադրության ոլորտում նորարարական արտադրանքներ, սարքավորումներ, նյութեր և ծառայություններ:

Ցուցահանդեսը նախատեսում է ներկայացնել տարածաշրջանային սննդամթերքի արտադրության լայն տեսականի: Միջոցառումները, ինչպիսիք են B2B հանդիպումները, հնարավորություն կընձեռեն նոր կապեր հաստատել և զարգացնել գործնական հարաբերությունները:

2-րդ B-FoST 2018 համաժողովի ցուցահանդեսի ուղղություններն և մասնակից կողմերն են՝

- ✓ Մենդի և ըմպելիքի արտադրություն և վերամշակում
- ✓ Մենդի բաղադրիչներ և հավելումներ
- ✓ Սննդամթերքի լաբորատոր և հիգիենիկ նախագծման սարքավորումներ
- ✓ Սնունդ վերամշակող արժեշղթաներ
- ✓ Մենդի փաթեթավորման սարքավորումներ
- ✓ Ծառայություններ
- ✓ Բուիեր, կրթական հաստատություններ և տպագրություն
- ✓ Առևտրային ասոցիացիաներ

2-րդ B-FoST 2018 համաժողովի ցուցահանդեսային վճարներ		
Վաղ գրանցում մինչև հուլիսի 30-ը 2018թ.		Գրանցում օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը 2018թ.
Վահանակի (ստենդի) համար տաղավար (դրամ)	120,000	150,000
Ազատ տարածք (դրամ)	80,000	100,000

Ցուցահանդեսի փաթեթ 80,000/100,000 դրամ արժողությամբ

- ✓ Ընկերության 1 մասնակցի գրանցում
- ✓ Ընկերության 1 մասնակցի համար Գալա-ընթրիք
- ✓ Ցուցահանդեսի տարածք (սեղանի տեղակայում գովազդային նյութերի ցուցադրման համար)

- ✓ Ընկերության տեսանյութը՝ առավելագույնը 1.5 րոպե տևողությամբ ցուցադրություն (տրամադրվում է մասնակցի կողմից)
- ✓ Ընկերության ապրանքանիշը համաժողովի վեբ կայքի ցուցահանդեսի էջում
- ✓ Հղում միջոցառման վեբ կայքից անմիջապես ընկերության վեբ կայքը

**Ցուցահանդեսի փաթեթ 120,000/150,000 դրամ արժողությամբ**

- ✓ Ընկերության 2 մասնակիցների գրանցում
- ✓ Ընկերության 2 մասնակիցների համար Գալա-ընթրիք
- ✓ Ցուցահանդեսի տարածք (6մ<sup>2</sup>)
- ✓ Ընկերության տեսանյութը՝ առավելագույնը 2.5 րոպե տևողությամբ ցուցադրություն (տրամադրվում է մասնակցի կողմից)
- ✓ Ընկերության ապրանքանիշի ցուցադրություն, գլանափաթեթների վրա (տրամադրվում է մասնակցի կողմից)
- ✓ Ընկերության ապրանքանիշը համաժողովի վեբ կայքի ցուցահանդեսի էջում
- ✓ Հղում միջոցառման վեբ կայքից անմիջապես ընկերության վեբ կայքը

**Գովազդային նյութերի տպագրության, դրանց տեղափոխման և հանձման ինչպես նաև հավաքման համար պատասխանատու է հովանավորը կամ ցուցահանդեսի մասնակիցը:**

**ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՋԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ԵՎ ՎՍՏԱՀ ԵՂԵՔ, ՈՐ ՁԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՖՈՐՈՒՄՈՒՄ ԿԼԻՆԻ ՇԱՀԱՎԵՏ ՁԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք կապնվել

Գոհար Բադալյան, տ.գ.թ.

EHEDG-ի հայաստանյան տարածաշրջանային բաժնի  
համանախագահ

ASFoST

Հեռ.՝ + (374) 43 800050

Էլ. փոստ՝ [asfost2010@gmail.com](mailto:asfost2010@gmail.com)

Համաժողովի նախագահ  
ASFoST-ի նախագահ, EHEDG- ի հայաստանյան տարածաշրջանային բաժին՝  
Դոկտոր՝ Կարինե Գրիգորյան

